ԱՆՄԵՂ ԶՐՈՅՑՆԵՐ *)

I

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԻՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ Չ'ԸՆԴՈՒՆՆԵՑԻՆ

(Գաւառացու օրագրից)

Ա

Առաւօտ էր. նոր էի լուացուել ու հագնուել, երբ ժամկոչ Պետրոսը սեղանատան դուռը կամացուկ բանալով՝ գլուխը ներս խոթեց և հանգիստ ձայնով ասաց.

—Օղորմի Աստուած։

—Հա՛, ի՞նչ ունիս. բարի լինի գալդ, հարցրի ես ժպտալով։

—Բարի չելած ի՞նչ պտի լինի. Աստուած չարը քու թշնամուն տայ, պատասխանեց Պետրոսը ծանրութեամբ, ապա մեծկակ քոշերը մի քանի անգամ դրսի յատակին զարկելով՝ ազատեց նրանցից ահագին ոտքերը և մորթէ գդակը կռան տակն առնելով, ներս մտաւ սենեակ։

—Աղբէր, էս անտէր ցեխն ու ձիւնը չեն թողնում որ աչք բանանք. քոշերս հլէ նոր եմ առել, էրէկ չէ, մէկէլ օրը, սկի էրկու ամիս չըկայ. ամա էլի ծակուել ա. գուլբաներս գիփ թաց են ըլել... այս խօսքերով առաջ անցաւ ժամկոչը՝ յառելով աչքերը մօրս

**) Այս վերնագրի տակ կըհրատարակենք «Լումայ»-ում մեր աշխատակից պ. Մուրացանի մի շարք գաւեշտական զրոյցները։* ԽՄԲ.

վրայ, որ սեղանի առաջ նստած՝ թէյ էր լցնում բաժակները։

—Այ չըմեռնես դու, հմի պօլերը կեղտոտել ես, տներդ որ թաց են՝ ընչի՞ չես սրբում յետոյ մտնում, նկատեց մայրս ժամկոչին։

—Չէ, [illegible]ուղի-հաքիր, մեղք մ'անիլ. պօլը չեմ կոխել. չըռեսմը ոնց ոտխ մէկը շէմքումը դրի՝ մէկէլը փահլուանի նման ադըմ արի, խալիչի վրայ դրի՞։

—Ա՛ մեռած, խալիչան չի՞ կեղտոտուիլ։

—Խալիչի բանն ուրիշ ա, կեղտը վրան չի էրեւում, առարկեց Պետրոսը։

Լաւ, կարճ կապիր, ինչի՞ համար ես եկել, հարցրի ես։

—Հեր օրհնած, թող մի նափաս (շունչ) քաշեմ է. ախր էս նմուշթին եկայ... եա չէ մի ստաքան էս տաք չրէցը խմեմ որ խօսամ... նկատեց ժամկոչը, կարծես, վիրաւորուած։

—Դրուստ ա ասում. թող չայ խմի, յետոյ կըխօսայ. ձայնակցեց մայրս և պատրաստ բաժակը դրաւ ժամկոչի առաջ։

—Աստուած օրհնի էս չայ շինողին. ասըմ են ռուսն ա շինել. գիտում չեմ ղո՞րթ ա թէ սուտ, ամա, հախ Աստծու, լաւ բան ա. մարդ որ խմում ա օսկորները կակղում են, այս յառաջաբանով մօտեցաւ ժամկոչը բաժակին։

—Ուղիղն ասա, Պետրոս, չէ՞ն է լաւ թէ՞ արաղը, հարցրի ես կատակով։

Պետրոսի աչքերը փայլեցին և նա ժպտալով պատասխանեց։

—Ըզենց բանն ընչի՞ ես ասում... Դու որ պսակուել ուզենաս ու ես գամ հարցնեմ թէ՝ Սիմօ՛ն-աղա, ջեհէ՞լ աղջիկ կուզես թէ՞ պառաւ, դու ի՞նչ ջուղաբ կըտաս։

—Ի հարկէ, կասեմ՝ ջեհել։

—Բա էլ ընչի՞ ես հարցնում թէ՝ չայն ա լաւ թէ արա՛ղը. խէ՞ դու գիտում չես որ չայը՝ պառաւ աղջիկն ա, արաղը՝ ջահե՛լ... մատաղ ըլեմ արաղ ստեղծողի հոգուն. մի ռումկա որ մարդ կուլ ա տալի, ասես, անմահական ա դառնում։ Ըղենց չի՞, Շուշի-հաքիր, դարձաւ ժամկոչը մօրս։

—Ես ի՞նչ գիտեմ, արաղ հօ չեմ խմել, պատասխանեց վերջինս։

—Բա՛... էն ա, ասա, անմահական ջրի զօրութիւնը փորձել չես էլի... Աստուած յաջողի՝ քիչ էլ պառաւես, համին կընկնես, էն չախը որ ռումկան դնես բերանիդ, կասես՝ «հոգիդ լուս դառնայ, Ժամհար Պետրուս, էս ինչ ղիամաթ (երևելի) զադ ա ըլել»։

—Աստուած ոչ անի. ես մինչի մահս արաղ չեմ դնիլ բերանիս, նկատեց մայրս։

—Չէ, չէ, Շուշի-հաքիր, էդ ասիլ մի՛, արաղը, որ կայ, ծերոց դաւազանն ա. թէ որ մին մին կուլ չըտաս, գիտա՛ս որ հարսդ գլուխդ ծեծելու ա։

—Ընչի՞, ա մեռած։

—Ընդուր որ օյաղ վախտդ (ժամանակդ) սկսիլու ես ամեն բանի խառնուէլ, ամեն բանի համար խօսալ. հարսդ էլ էս բանը վեր չ'ունենալու, էնդուց դէնը տուր ու տմբոցն սկսելու ա։ Ամա դէ որ մին ռումկա ռաւօտանց կուլ տաս, մինն էլ կէսօրին, մինն էլ րիգունը. մին մին էլ, թէ կարաս, դրանց մէջ տեղումը, էն ա քէֆդ չաղանալու ա, էլ սաղ օրը ոչ խերին ես խառնուիլու ոչ շառին։ Հարսդ էդ բանը տեսնելով՝ փարվան (պտոյտ) ա տալու, ջան էք ասելու, ջան լսելու։

—Ա՛ մեռած, բա ես կա՞րամ ըղենց բան անիլ, հարցրեց մայրս ծիծաղելով։

—Դէ որ չանես, տունդ սաղ օրը ղալմաղալում կըլի... ա՛յ, էդ բանը լաւ ա հասկացել մեր էրէցփոխը։ Հենց էն ա տեսնում ա՝ որ սկսում եմ մըրթմըրթալ—ա-

ռանց գլան էլ հօ չի ըլել, մարդ ենք, մի օր էս պակասութիւնն ենք տեսնում, մէկ էլ օր՝ էն պակասութիւնը, կարում չենք որ համբերենք, չըխօսանք — էն ա էդենց վախտը (ժամանակ) սիպտակ աբասին գնում ա ձեռքումս հու ասում. —«Ս. Պետրոս, տեսնում եմ որ ծարաւել ես, գնա մի գօյինջան (կուժ) կուլ տուր»: Ես էլ, ինչ մեղքս ծածկեմ, գլուխս քաշ եմ գցում ու թուշ (ուղիղ) Կարունի դուքանը գնում: Նրա արաղը, զորթ ա, խաղողի չի, թութի ա, ամա դէ որ տրեցատական (չափ) քամում եմ, վրան էլ մի կտոր հաց, եա աղի խիար ծամում, էլ ամեն ինչ մոռանում եմ, ոչ ժամ ա միտս գալի, ոչ պատարագ. հենց իմանում եմ աշխարհն իմն ա, միջի մարդիկն էլ՝ մարդիկ չեն, հրեշտակներ են:

—Ուրեմն երէցփոխէ՞ց էլ կաշառք ես առնում, հարցրի ես ծիծաղելով:

—Կաշառք խէ՞ եմ առնում. ես հօ նրա դատաւորը չեմ. ամա դէ մարդ ա, զալմաղալ չի սիրում, ուզում ա խաթրս առնի որ դէս ու դէն չը ման գամ ու իրա վրայ չը խօսամ:

—Ինչո՞ւ, դու ինչ կարող ես խօսել նրա վրայ. հարցրի ես միամտօրէն:

—Բա՛, ինչ կարող եմ խօսիլ է՞... բաներ շա՛տ...

—Օրինա՛կ:

—Այ, հենց մէկ էլ օրը Նալբանդ Ուհանի կնիկը ջուր էր քաշում ժամի հորիցը: Ժամաւորն էլ դուս եկած՝ հայաթումը ման էր գալի: Երէցփոխը եկաւ բղաւեց խեղճ կնկայ վրայ թէ՝ «ինչի՞ էդ շարինջը (դոյլ) հորի պատերին ես խփում, հողը ներս թափում. հօ մէկ էլ օրն եմ քեանքեանչուն չորս մանէթ տուել հորը մաքրել տուել. ուզում էք որ ամեն շաբաթ ժամը ձեր ջրի համար չորս մանէթ կորցնի՞...»: Խեղճ կնիկը ամօթից՝ քիչ մնաց՝ տափն էր մտնում: Ես բա-

ները քէփումս չեկաւ։ Նփ որ ժողովուրդը հեռացաւ, մօտեցայ էրէցփոխին հու ասեցի.—աղա՛, ախար քեանքեանչի Մուստաֆին ես եմ բերել, հորը թամզացնելէ փողն էլ—վեց շահին—իմ ձեռքովն ես տուել, բա խէ խալխի միջումն ասում ես «չորս մանէթ եմ տուել»։

—Յետոյ ի՞նչ պատասխանեց։

—Ասում ա, «հարամզադա՛յ, գիտո՞ւմ չես որ վեց շահին—չորս մանէթ պտի ասեմ որ էս անզգամ կնանիքը վախեն, հորի ջուրը իթիաթով (խնամքով) բանեցնե՞ն»։ Ամա, ի՞նչ մեղքս ծածկեմ. ես ընենց եմ իմանում թէ նա, որ էլլիկի (ժողովրդի) առաջին ընենց բարձր ձէնով չորս մանէթ ասեց, հենց ընենց էլ գրելու ա իրա հաշւումը։

—Եւ դրանից յետոյ, ուրեմն, սպիտակ աբասին ստացա՞ր։

—Չէ, աբասին երէկ տուաւ։

—Ի՞նչ պատճառով։

—Ա՛յ թէ ի՛նչ։ Էս քանի օրը, հօ տեսաք, մի գլուխ ձիւն էր գալի։ Ժամի հայաթումը էնքան էր կիտուել որ չորս մարդ չէին կարալ թամզացնիլ։ Բայց ես ու Մուխսի Գալուստը մի օրումը հաւաքեցինք, դուս տարանք քուչէն։ Նրէկ ըռաւօտ, ժամից եդը, ես խորանումը շապիքները ծալում եմ, տեսնեմ Լալինց Մեսրոբը՝ հենց խորանի լուսամտի առաջ՝ էրէցփոխին հարցնում ա թէ՝ «ըստեղ մեծ ձիւն կար, հո՞վ դուս տարաւ»։ Նրէցփոխն էլ ասում ա թէ՝ «հո՞վ պըտի տանէր. չորս ղարադաղցի մշակ բռնեցի, ամեն մինը իննը շահով, սաղ օրը բան արին՝ ու անջախ (հազիւ-հազ) որ հայաթը մաքրեցին»։ Էս որ լսեցի, բէյինս (ուղեղս) ժաժ եկաւ։ Մէկ մտածեցի թէ՝ գնամ հենց Մեսրոբ—աղի մօտը խօսամ, մէկ էլ ասեցի «նահլաթը չար սատանին, թող մը քիչ համփերենք». էն ա որ Մեսրոբաղան հեռացաւ, թիւնդուած (զայրացած) մօտեցայ

էրէցփոխին.—աղա՛, ասում եմ, ախր էս հայաթի ձիւնը մենք ենք թամզել, դրա համար էլ իսկի մեզ էրկու շահի չես տուել. բա ընչի՞ ես Լալիւնց Մեսրոբին ասում թէ՝ մշակներին փող եմ տուել հու մաքրել որ. ւել։ Ասում ա «մ՛յ հայվան, բա գիտ՞ում չես որ մեր ժամը աղքատ ա. եկամուտ չունի՞. ըսենց պէտք ա ասենք որ մարդիկ իմանան թէ ժամը ծախքեր ունի, հու մի մի անգամ օգնութիւն անե՞ն»։ Էս խօսքերին, հալբաթ որ (ի հարկէ), ես չը հաւատացի. գլուխս ժաժ տուի ու հենց էն ա, ուզումի ասեմ թէ՝—չէ, ա՛ղա, դըրուստն էդ չի, դըրուստն էն ա, որ Լալիւնց Մեսրոբը հաշուատես ա. դու հմիկուանից նրա ականջն ես. գցում էդ բանը որ յետոյ հաշւումդ գրես ու նա բան չասի դրա համար.

—Եւ չասացի՞ր։

—Հենց էն ա ուզումի ասեմ, մէկ էլ տեսնեմ աղբաթի-խէրը սիպտակ աբասին դրաւ հափռումս (բըռանս մէջ).—«գնա՛, ա մեռած, գնա լակիր, ասում ա, տեսնում եմ որ էլի ծարաւել ես, ապկից գլխից դուս ես տալիս»։ Ես էլ, ի՞նչ մեղքս ծածկեմ, աբասին վեր կալայ...։

—Եւ իսկոյն էլ տարիր Կարունի դուքանը, հարցըրի ես ժպտալով։

—Բա ըսկի թողո՞ւցի որ ջանին քամի դիպչի՞... տարի, հու քո կենացը լաւ անուշ արի։

Այս խօսքերի հետ վերջացնելով Պետրոսը թէյի երկրորդ բաժակը, սրբեց բեխերը շալէ կապայի փէշով, ապա կնճռոտ դէմքին տալով աւելի մեղմ ու քաղցր կերպարանք աւելացրեց.

—Էնքանը հաքիր ջան, բաւական ա. մին ռում-կա էլ էն զարհմարիցը բե՛ր խմեմ, Սիմօն աղէն օրհնեմ։

Մայրս, ի հարկէ, կատարեց ժամկոչի խնդիրը.

Վերջինս ուրախութիւնից դողացող ձեռքով առաւ բա-
ժակը և ժպտալով ասաց.

—Շատ բան չեմ ուզում Աստծուց. հենց էնքան
ըլի որ մինչև մահուանս օրը՝ կարամ ամեն օր էրկու
ռումկայ էս անմահական ջրեցը խմել։ Լուս դառնայ
Զիլփունց Ուհանջանի հոգին, ասըմ են նա ա արաղը
ադաթ գցել մեր երկրումը, առաջ բոկի ըլել չի... Այս
ասելով բաժակը դատարկեց։

—Ա մեռած, բա ասըմես՝ արաղ տուր խմեմ Սի-
մօն աղին օրհնեմ, հմի Զիլփունց Ուհանջանէն ես
օրհնում, ընդհատեց մայրս ժամկոչին։

—Բա՛, Շուղի-հաքիր, եանղըշ եկայ (սխալուեցայ),
եկ էս մինը թաւ չանենք (չըհաշուենք), մինն էլ ա-
ծա՛ խմեմ Սիմօն աղին օրհնեմ։

—Չէ, չէ, ինձ օրհնանք չէ պէտք. խմածդ բա-
ւական է, այժմ ասա՛, ինչո՞ւ համար ես եկել, ընդհա-
տեցի ժամկոչին՝ տեսնելով որ նա ի չարն է գործ
նում մօրս բարութիւնը։

—Ասեմ բա՛, ախար որ միտս չես գցում, պատաս-
խանեց Պետրոսը, կարծես, նոր ուշքի գալով—էրէցփո-
խը խնդրում է որ նեղութիւն քաշես ու մի սհաթով
գաս ժամի օթախը։

—Ի՞նչ կայ. հարցրի ես.

—Ասըմա հաշուատեսները եկել են, պէտք ա հա-
շիւներին ձեռք քաշեն. դէ ձեր տանից էլ մինը պըտի
ըլի, չուն դուք էլ հաշուատես էք։

—Հայրս է ընտրուած, ինձ ինչո՞ւ է կանչում։

—Դէ հերդ ըստեղ չի, ասըմ են դիֆ մէկ ա, դու
ըլես՝ թէ նա։

—Ասողն ո՞վ է, երէցփո՞խը, հարցրի ես՝ կամենա-
լով հաւաստիանալ թէ՝ արդեօք ինձ հրաւիրողը միայն
նա է թէ՞ նաև լիազօրները։

—Երէցփոխն էլ է ասում, հաւաքուած հաշուա-

տեսնին էլ, պատասխանեց Պետրոսը։

Ուրեմն հրաւէրը երկու կողմից էր, հետևապէս, կարող էի չըմերժել։

—Լաւ, կը գամ, դու գնա՛, ասացի ես։

—Դէ շուտ եկ, քե մատաղ. ընենց ըլի որ չը եղանաս, երէցփոխը վրաս չըբարկանայ... Ասպա դառնալով մօրս՝—Ծուղի-հաքիր, արադ փորումս դամ ա տալի, Աստուած տունդ շէն պահի, ասաց ժամկոչը և մորթէ գդակը գլուխը քաշելով՝ դուրս գնաց սենեակից։

Բ

Ժամհարի դուրս գնալուց յետ՝ սկսայ մտածել ստացած հրաւէրի մասին և տեսայ որ դա պատուաբեր բան է։ Դրանով, ուրեմն հասարակութեան լիազօրները յայտնում էին ինձ իրենց վստահութիւնը։ Կընշանակէ ես արդէն արժանի էի դրան... Եւ այդ վայրկենին, ի՜նչ մեղքս թագցնեմ, սկսայ ինքս ինձ ուռչել և հպարտանալ, որովհետև հասկանում էի թէ՝ ի՞նչ է նշանակում երեցփոխանական հաշիւներ քննելու համար եկեղեցուց հրաւէր ստանալը։ Այդ նշանակում էր թէ՝ ես արդէն կատարեալ մարդ եմ և պիտի նստեմ լիազօրների շարքում... իսկ լիազօր ասած, մանաւանդ այդ ժամանակներում, հասարակ մարդ չէր լինում, հապա աշխարհում երկար ապրած, շատ չար ու բարի տեսած, մեծ փորձառութիւն և դրա հետ միասին էլ դիրք ու անուն ձեռք բերած անձնաւորութիւն... իսկ այդպիսիների հետ նստելով հասարակական գործի մասնակցելը, —ընդունեցէք որ—գերագոյն պատիւ էր։

Այս իսկ պատճառով իսկոյն հանեցի հասարակ հագուստս և փոխարէնը հագայ սև շորեր, (ինչպէս կըվայելէր հասարակական ժողովի հրաւիրուած մարդուն), ապա հայելու մէջ լըջօրէն նայեցի վրաս, փողպատս ու

մազերս խնամքով չտկեցի, նոր բուսնող ընչացքիս ծայրերը ոլորեցի և վերջը մօրս առաջարկած թէյի երկրորդ բաժակը այնպէս արագ խպշտեցի որ լեզուս այրեց։ Բայց որովհետև այդ անախորժութիւնը պատահեց ինձ հասարակական գործի պատճառով, ուստի քաղաքացիական քաջութիւն ունեցայ չըտրտնջալու։

Երբ դուրս եկայ փողոց, ինձ այնպէս թուաց թէ՝ հասակս բարձրացել է, որովհետև մէջքս, հակառակ սովորականին, բռնել էի ուղիղ, իսկ գլուխս բարձր։ Դրա պատճառը, ես կարծում եմ, այն էր որ հենց այդ վայրկեանին մտածում էի այն մասին թէ՝ որովհետև երէցփոխն ու լիազօրները պատիւ են արել՝ հօրս փոխարէն ինձ հրաւիրելու, ապա ուրեմն ես այնպիսի խիստ ու լուրջ ձևով պիտի վերաբերուեմ քննութեան գործին որ նրանք զարմանան և ասեն թէ՝ «ա՛յ հասկացող մարդ»։ Այդ վայրկենին ես, ի հարկէ, յիշեցի նաև, ժամկոչի խօսածները և որոշեցի աչքի առաջ ունենալ նրանց քննութեան միջոցին։

Որովհետև եկեղեցին մօտ էր մեր տանը, ուստի շուտով էլ հասայ նրան։ Երբ ներս մտայ երէցփոխի սենեակը, այդտեղ արդէն բազմած էին ինքը՝ երէցփոխը և ժողովրդեան վեց լիազօրներ։ Նրանք բոլորել էին մի մեծ սև մահուդով ծածկուած սեղան, որի վրայ դրուած էին ժապաւինեալ մատեաններ, հաշուեցոյց թերթեր և մի մեծ համարիչ։ Սենեակի մի կողմը բռնած էր մի լայն դարակ՝ զանազան բաժանմունքներով, որոց մէջ դարսուած էին զանազան գնի ու մեծութեան ոսկեզօծ ու հասարակ մոմեր։ Իսկ հանդիպակաց պատի ուղղութեամբ դրուած էին երկու ապակեծածք մեծադիր պահարաններ, որոց մէջ կախուած էին թանկագին շուրջառներ ու արծաթէ բուրուառներ։ Իսկ դըրանց վերևը՝ շարուած մեծագին թագեր, սաղաւարտներ և այլ այնպիսի իրեր, որ անկարելի էր թողնել ե-

կեղեցում, կամ յանձնել հասարակ սպասաւորի հսկողութեան։ Սենեակի անկիւններում, նոյնպէս, դրուած էին այնպիսի քշոցներ, խաչուառներ ու աշտանակներ, որոնք գործ էին ածւում միայն հանդիսաւոր օրերին։ Միով բանիւ, երէցփոխի այդ սենեակը նմանում էր աւելի եկեղեցու մի բաժանմունքի, քան այնպիսի մի յարկի, ուր կարելի էր նստել հաշիւներ քննել, կամ նրանց մասին խօսել։

Ճիշդ շրջապատող իրերի չափ լուրջ կերպարանք ունէին և սենեակում բազմողները։ Երէցփոխը, որ մի կարճահասակ, առողջակազմ, փոքր ինչ հաստափոր և վաթսունը անցած մարդ էր, աչքի էր ընկնում իւր խոշոր ու ազդու դէմքով, որն ամբողջապէս ծածկուած էր գորշախառն մօրուքով։ Նա ունէր նեղ ու կնճռոտ ճակատ և երկարամազ ու խիտ յօնքեր, որոնք աւելի ևս խստացնում էին խոր ընկած աչքերի հայեացքը, թէպէտ և դրանք պատսպարուած էին լայնագոգ ակնոցներով։ Մի առանձին վեհութեամբ նա քաշում էր իւր սաթէ համարիչը՝ աշխատելով ցուցահանել ձեռքերի կապոյտ ծաղկատիպը, որ, ընդհանրապէս, իսկական մահտեսութեան ապացոյց է համարւում։

Երէցփոխի աջ կողմը նստած էր Ղալիւնց Մեսրոպ-դային, իսկ ձախ կողմը՝ Տուտուշենց Մ՝ցական-բէկը։ Առաջինը՝ երէցփոխին հասակակից, բայց նրանից աւելի բարեդէմ մի մարդ էր և քաղաքում յայտնի իւր սնըխչական (կոտրածը ողջացնող) արհեստով. որով սակայն պարապում էր ոչ իբրև մասնագէտ, այլ իբրև սիրող և այդ պատճառով էլ աւելի յարգի էր ժողովրդի աչքում։ Երկրորդը՝ նրանից տարիքով պակաս, բայց խիստ հաստափոր մէկը, որ թէ խօսալիս և թէ ճանապարհ գնալիս շարունակ հևում էր։ Սա էլ յայտնի էր քաղաքին իբրև կալուածական վէճերի հմուտ կարգադրիչ կամ նրանց վերաբերեալ խնդիրներ շարադրող, որովհետև քա-

ղաքի հողերը բաժանող մասնաժողովի նախագահն էր։ Դրանցից յետոյ գալիս էին՝ Բալա-ղուզին և Դաստակենց Աւան-ապերը։ Առաջինը՝ նիհար և փոքրահասակ, աչքի էր ընկնում իւր միշտ հինայած կարմիր մօրուքով. երկրորդը՝ նրանից քիչ յաղթանդամ, բայց տեսութեամբ տկար. այնպէս որ ձեռքին պատրաստ ունէր միշտ մի մօնօկլ, որով նայում էր հանդիպողին (մանաւանդ երիտասարդներին) միշտ մի առանձին ուշադրութեամբ։ Սրանք երկուսն էլ անորոշ պարապմունքի տէր մարդիկ էին և յայտնի միայն նրանով, որ առաջինը ապրում էր եկեղեցու հարաւային կողմը, իսկ երկրորդը՝ հիւսիսային։ Ապա գալիս էր Սափարունց Դաւութ-բէկը, որ թէպէտ Մցական բէկի չափ կարճահասակ և հաստափոր լինելով, նրա պէս էլ գօտին փորի վրայ կապելու տեղ, կրծքի վրան էր կապում, այնուամենայնիւ գիտութեամբ բարձր էր նրանից, որովհետև կարող էր ընտիր արզաներ (խնդրագրեր) գրել ոչ միայն կալուածական, այլ և քաղաքացիական ու քրէական ամենաբարդ խնդիրների մասին։ Ամենից վերջը նստած էր Ղզարենց Աբրահամ ապերը, որ մի բարձրահասակ, բայց հեզ ու հանդարտ մարդ էր և երևելի նրանով՝ որ Դաւութ-բէկի հարևանն էր։

Ներս մտնելուս պէս՝ բոլորն էլ հայեացքները սևեռեցին վրաս, իսկ Մեսրոբ դային հեղինակաւոր ձայնով նկատեց.

—Ա՛ բալամ, խի՞ եդացար. էսքան հոգի քեզ ենք սպասում։

—Ներողութիւն, Մեսրոբ—դայի, չեմ յետացել, գուցէ ժամկոչն է ուշ եկել, արդարացայ ես։

—Կըլի որ էն լիմարն ա ուշ գնացել, մէջ մտաւ երէցփոխը, կամենալով հաճելի լինել ինձ։

—Լաւ,վնաս չունի, էդա եկել ես,հմի մեր գործը տեսնանք. համաձայնուեց Մեսրոբ-դային և ապա աւելացրեց.

—Գիտո՞ւմ ես քեզ խի՞ ենք կանչել։

—Կարծեմ երեցփոխի հաշիվներին...

—Հա, երեցփոխի հաշիվներին ձեռք քաշելու (ստորագրելու) համար, ընդհատեց Մեսրոբ դային և ապա ավելացրեց—ըստեղ վեց հաշուատեսներ ենք, օխտնջինն էլ (եօթերորդը) քո հերն (հայրն) ա, նա հու ըստեղ չի...

—Երկու օրից կըդայ, յայտնեցի ես։

—Երկու օրն ուշ ա. էս հաշիվները Սրբազանն ուզել ա. էսօր պէտք ա ղրկենք կանդատորը. հմի մենք վեց հոգիս ձեռք կըքաշենք, դու էլ, վնաս չունի, քո հօր տեղ ձեռք կըքաշես։

—Շատ բարի, համաձայնուեցայ ես։

—Դէ վե՛ր ա՛ռ, Դաւութ-բէկ, թուղթը հաշիվը քեզ մօտ ա, առաջ դու ձեռք քաշիր, կարգադրեց երեցփոխը։

—Ընչի՞, թող առաջ մեծերը (հասակաւորները) ձեռք քաշեն, ա՛յ, Մեսրոբ-դային, Աբրահամ-ապերը...

—Ա. բալամ, էլ ո՞ւր ես մեծ ու պուճուր անում, մենք հասակով ենք մեծ, դու խելքով. վեր կալ ձեռք քաշիր, նկատեց Մեսրոբ-դային։

—Չէ, Մեսրոբ-դայի, չի ըլիլ, առաջ դու վերկալ, յամառեց Դաւութ-բէկը և հաշուի թերթը մօտեցրեց նրան։

—Լաւ, ըդէլ թող քու ասած ըլի, համաձայնեց Մեսրոբ-դային և թուղթն առնելով ստորագրեց՝ բարձրաձայն արտասանելով—Մեսրոբ Թառումեանց... Բա՛, էս ցօ-ին հաքին (պոչը)՝շատ էրկանացաւ, հու վնա՞ս չունի։

—Տնաշէն, հինչ վնաս ունի. թող էնքան էրկանանայ որ ՙհլա աղուէսի հաքի դառնայ, ծիծաղելով նկատեց Մցական-բէկը և թուղթն առնելով՝ ստորագրեց իւր անունը խիստ արագ։

—Բահ, մարդ էլ կարայ ըդենց գիր գրի է... ես հրէս ագռաւի չանչիւլներ (չանգեր) եմ քաշիլու, ասաց Բալա-ղուզին և թուղթն առնելով՝ իրաւ որ մի քանի զոյգ չանգեր գծեց նրա վրայ։

—Ասել (խնկական) ստորագրութիւնն էլ քունն ա որ կայ, գովեց Բալա-ղուզուն Դաւութ-բէկը, ապա ինքն էս ստորագրելով թուղթը տուաւ Աւան-ապօրը։

Վերջինս մօնօկլը սազացրեց աջ աչքին, ձախը փակեց և ապա ծնօտը մի կողմը ծռելով և շրթունքները պրպտացնելով՝ գրեց «Աւանէս Դաստակով»։

—Դու էլ տո՛ւր Աբրամին, կարգադրեց երեցփոխը։ Աւան-ապերը թուղթը դրաւ Նշարենց Աբրահամի առաջը։

Վերջինս զգալով որ լուրջ պարտաւորութիւն ունի կատարելու, սկսաւ հանդիսաւոր կերպով պատրաստուել դրա համար։ Նախ հանեց կապոյտ աղլուխը և իւր երկար, լղար քիթը խնամքով նրա մէջ առնելով՝ երկու անգամ ուժգին խնչեց, յետոյ թաշկինակը ծալելով և գրպանը դնելով, առաւ գրիչը, նայեց մէկ նրա ծայրին մէկ էլ ստորագրելի թղթին. յետոյ գրիչը իրար վրայ երեք անգամ թաթախեց թանաքի մէջ, ապա մի վերջին անգամ էլ նայելով գրչի ծայրին՝ թուղթը ջերմեռանդութեամբ մօտեցրեց իրեն և սկսաւ ծանր ու հանդարտ ստորագրել՝ «Աբրահամ Բագրատեանց»։

—Դո՛ւ էլ լաւ գիր ունես հա՛, վիզը երկարացնելով և կարմիր մօրուքը թղթին մօտեցնելով՝ նկատեց Բալա-ղուզին։

—Գիր ա, ըլի՛, լաւ-օսալ գրում ենք, մեզանից հու փիլիսոփայ դառնող չ'ինելու, համեստութեամբ նըկատեց Աբրամ ապերը։

—Դէ հմի դու մնացիր. վեր առ ձեռք քաշի՛ր, կ՝արգադրեց Մեսրոբ-դային՝ դառնալով դէպի ինձ։

Ես թուղթը առաջս քաշեցի և սկսայ թերթել։ Հաւատացած լինելով որ վեց հաշուատեսները բաւականաչափ ծանօթացել են գործին, պարտքս համարեցի, ստորագրութիւնս դնելուց առաջ, ինքս էլ ծանօթանալ նրան։

Սկսելով կարդալ սկզբից, տեսայ որ հաշուի մէջ

հետզհետէ նշանակուած էին եւ և մուտքի ամփոփ գումարներ, խիստ կարճ բացատրութիւններով, ուստի դիմելով երէցփոխին, ասացի.

—Ինչպէս երևում է՝ սա ձեր հաշիւների ընդհանուր ամփոփումն է, ապա ո՛րտեղ են գրուած նրանց մանրամասնութիւնները։

Երեցփոխը նախ՝ մի զարմացական հայեացք ձգեց վրաս և ապա մատնացոյց անելով ժապաւէնեալ մատեանները, արհամարհական սառնութեամբ ասաց.

—Ա՛յ, սրանց մէջ։

—Կարելի՞ է արդեօք նայել և մի քանի գումարներ ստուգել, հարցրի ես միամիտ քաղաքավարութեամբ։

—Հը՜րմ... արաւ երէցփոխը քթի մէջ և չըպատասխանեց։

—Ի՞նչ ես ասում... հարցրեց Աւան ապերը մօնօկլը վրաս ուղղելով։

—Ասում եմ մի քանի գումարներ ստուգեմ։

—Ի՞նչ գումարներ ստուգես, մէջ մտաւ երէցփոխը, այս անգամ արդէն դէմքը խոժոռելով։

—Այ, օրինակ, այստեղ դուք գրում էք. «Զրօրհնեաց պատրաստութեան ծախք 34 ր. 60 կ.»։ Ես հետաքրքրւում եմ իմանալ թէ՝ ի՞նչ ու ի՞նչ բաների են տրուած այդ 34 ր. 60 կոպէկը։

—Հը... ըմ, դարձեալ մնչացրեց քթում երէցփոխը և ապա դառնալով հաշուատեսներին թթուած ժըպիտով հարցրեց.—ո՛նց էք հաւանում սրան։

—Ադա. ի՞նչն ես ստուգում, կէս զարմացած և կէս վշտացած դարձաւ ինձ Մեսրոբ դային։

—Ի՞նչպէս թէ՝ ինչն եմ ստուգում... Դուք ինձ առաջարկում էք ստորագրել այս հաշիւներին իբրև հաշուատես. էհ, ես չըպէտք ե՞ նախ սրանց ճշտութիւնը ստուգեմ, յետոյ ստորագրեմ։

—Բօ՛, բօ՛, տես հալա ինչ ա ասում. ադա, սա

դուքանի հաշիւ ա որ ստուգես. բա ըսկի էս ժամիցը, էս խաչվառներիցը եա քշոցներիցը քաշւում չես որ ըտենց բան ես ասում... սուս կաց որդի, սուս կաց. ջահել ես, մեղքն ու վարձքը չես հասկանում. վեր կալ էդ թուղթը, ձեռք քաշիր ու գնա բանիդ, խրատական եղանակով խօսեց Մեսրոբ դային։

—Ես չեմ կարող ստորագրել մի թուղթ, որի բովանդակութեանը անծանօթ եմ, պնդեցի ես։

—Տօ, էս վեց պատուաւոր մարդկանցից ոչ մէկն էլ ա ըդենց բան չասեց, դու էդ ոնց ես ջուռխաթ անում (համարձակւում) ասում, բա ըսկի չես ամաչում, զայրացած ւ կատեց Դաւութ բէկը։

—Որդի, եկեղեցական բանումը ըդենց բան չեն խօսիլ, վեր կալ ձեռք քաշիր, կամացուկ շշնջաց ականջումս Աբրամ ապերը։

—Ձեռք քաշիր պրծիր, ուշանում ենք, նորէն խօսեց Մեսրոբ դային և աչքի ծայրովն էլ առանձին նշան արաւ որ հըյամառեմ։

—Չէ, չէ, հարկաւոր չէ, խօսեց երէցփոխը. հերը կըգայ ձեռք կըքաշի. թող մի երկու օր էլ բանը եդանայ, վնաս չունի։

Երէցփոխի յայտարարութիւնը և այս ու այն կողմից տեղացած մեղադրանքները այնպիսի մի տպաւորութիւն արին վրաս որ կարծեցի թէ՝ իրաւ, մեծ յանցանք եմ գործել. մանաւանդ երբ հօրս անունն էլ յիշեցին, էլ բոլոր քաջութիւնս կորցրի.

—Տուէք ստորագրեմ, եթէ կամենում էք, միայն թէ...

—Միայն թէ ի՞նչ. ընդհատեց Մցական բէկը։

—Միայն թէ հարկ եղած տեղը պիտի յայտնեմ որ առանց կարդալու եմ ստորագրել այս հաշիւը։

—Հարկաւոր չէ, հարկաւոր չէ. վերկա՛ց, գնա՛ գործիդ. քո ստորագրութիւնը իսկի չեմ ընդունիլ, զայրա-

ցած խօսեց երէցփոխը և թղթերը հաւաքեց։

—Ա՛ բալամ, դու խատակ ղալմաղալչի՞ ես էլել. նկատեց ինձ Մեսրոբ-դային խիստ վրդովուած։

—Ձեր հախն ա. (տեղն է), ձեզ ո՞վ ա ասում որ երէկ չէ մէկէլ օրուայ էրեխան բերէք ձեր միջումը նստացնէք՝ ես չէ, ընչի՞ չէք մտածում թէ՝ ըսենց ջեհելի ստորագրութիւնը ով կընդունի, խօսեց Մցականբէկը և ձեռքերը դարսեց փորի վրայ։

—Ես էլ էդ չե՛մ ասում, յարեց Բալա ղուզին, չնայելով որ դեռ ոչինչ չէր ասել։

—Ըզենց ա, բա՛, մասնակցեց ընդհանուր մեղադրութեանը և Լղարենց Աբրահամը։

Ինձ ոչինչ չէր մնում անել այլ ևս, ուստի վեր կացայ տեղից և ամօթահար դուրս եկայ ժողովից։

Կրկնակօշիկներս հագնելու ժամանակ ականջիս հասան երէցփոխի վերջին խօսքերը.

—Տնաշէններ, դուք էլ ասըմ էք՝ թուղթը տուր ստորագրի։ Բա՛ ես խելքս կորցրե՞լ եմ որ էդ քչեղակին (կաչաղակ) հաշիւ տամ ստորագրի. ես չէ դրա ստորագրութիւնը առաջնորդը կընդունի՞...

Ես ի հարկէ վրդովուեցայ որ երէցփոխը լիագորների ներկայութեամբ ինձ «քչեղակ» անուանեց, բայց ի՞նչ կարող էի անել, թողեցի և հեռացայ։

Գ.

Երկու օրից հայրս եկաւ. բայց այս դէպքի մասին ոչինչ չասացի նրան, մինչև որ տեսնէի թէ՝ պ. պ. հաշուատեսները ի՞նչ ձևով են յայտնում եղելութիւնը։

Երեկոյեան նա գնաց եկեղեցի և ուշ վերադարձաւ։ Իմ հարցին՝ թէ ուր էիր, հայրս գլուխը շարժելով պատասխանեց.

—Միթօմ գիտո՞ւմ չես։

—Ես ի՞նչ գիտեմ։

—Երէցփոխի մօտ էի։

—Հա՞։

—Հա՛։

Մի վայրկեան լռութիւն տիրեց. յետոյ հայրս հայեացքը սեւեռեց ինձ վրայ ու հարցրեց.

—Էդ ի՞նչ օյին ես հանել դու։

—Ի՞նչ եմ արել։

—Ո՞նց թէ՝ ինչ եմ արել։ Էն վեց պատուական մարդիկը որ քեզ միաբերան ասըմ են՝ ստորագրի երէցփոխի հաշուին, ընչի՞ չես ստորագրում։

—Հօ ստորագրում էի. բայց երէցփոխը չընդունեց իմ ստորագրութիւնը։

—Տե՛ս, տե՛ս, հալա ինչ ա ասըմ։

—Ի՞նչ եմ ասում։

—Տօ դու չե՞ս ասել թէ՝ հաշիւը մէկ մէկ պէտք ա կարդամ, փոնացնեմ (համեմատեմ)։

—Հա, ասել եմ, ինչ վատ բան եմ արել։

—Տօ, բաս ըդենց խօսողի ստորագրութիւնը կընդունե՞ն։ Ես էս ա տասը տարի ա հաշուատես եմ ընտրւում, ե՞րբ եմ երէցփոխի հաշուին մտիկ տուել, եա քննել, որ դու էդ պիծի (փոքր) տեղովդ ուզում ես քննես։

—Ուրեմն լաւ բան ես արել էլի՞. ժողովուրդը քեզ հաշուատես է ընտրել նրա համար՝ որ դու միայն քո ստորագրութիւնը դնես երէցփոխի հաշուի տակ և դրանով էլ պարտքից ազատ համարես քեզ։

—Բա էլ ուրիշ ինչ պիտի ըլի։

—Ի՞նչպէս թէ՝ ինչ պիտի լինի, չէ՞ կարող պատահել որ երեցփոխը սխալուի, կամ դիտմամբ տուածն աւել, իսկ ստացածը՝ պակաս գրէ՞, կամ փող թագցնէ՞...

—Սուս կաց, տօ, սուս կաց. էդ ինչե՞ր ես խօսում. խստակ անհաւատ ես դարձել... Ադա ժամի կողքիցը

կպած օթախումը, էն խաչերի, խաչվառների միջումը սխալմունք եա գողութին կըլնի։

—Ինչի՞ չի լինել. հենց ժամի միջումն էլ կըլլնի, նկատեցի ես։

Հայրս շրթունքները հուպ տուաւ, խէթ խէթ նայեց վրաս և գլուխը տխրութեամբ շարժելով՝ դուրս գնաց։

Այդ նշան էր որ նա այդ վայրկեննին ամենադժբաղդ մարդը համարեց իրեն՝ ինձ նման անառակ որդի ունենալուն համար...։

МՈՒՐԱՑԱՆ